# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՑԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՆԴՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

362
4-21

ՑԵՂԱՐԴԻ ՏՊԱՐԱՆ 1936 ԼԵՆԻՆԱԿԱՆ

26 JUN 2013
4-21
43.285
ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникяна
608
41

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՆԴՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տնայնագործների և արհեստավորների փոխ. ապահովագրության մասին ՀԽՍՀ ԿԳԿ և ԺԿԽ-ի 1929 թ. հունիսի 26-ի վորոշման լրացման վերաբերյալ:

ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ-ի 1932 թ. ապրիլի 7-ի վորոշումից:

Արհեստավորական կոոպերատիվ ընկերությունների անդամների աշխատանքի պայմանների և կենցաղի բարելավման ու առողջացման նպատակով, հանձնարարել Արհեստավորական կոոպերացիայի փոխ. ապահովագրական և փոխ. օգնության գանձարկղին, փոխադարձ ապահովագրական և փոխ. օգնության կարգով բոլոր արհեստավորական կոոպերացիայի կոոպերացված անձնավորությունների և նրանց ընտանիքի սպասարկումը: (Թոշակներով, նպաստներով, բուժ. և ախտահանիչ օգնության ապահովումը և այլն). (որ. ժող. ԽՍՀՄ-ի 1932 թ. № 26 հոդ. 160):

Վորոշում նպաստների վերաբերյալ Արհեստավորական կոոպերացիայի փոխ. ապահովագրական և փոխ. օգնության խորհրդի նախագահության հաստատման մասին:

1937 թ. հունիսի 9-ին:

1. Հաստատել յերեխաների ծննդյան նպաստների վերաբերյալ կից կանոնադրությունը:

2. Տարածել սույն կանոնադրության գործողությունը ԽՍՀՄ-ի արհեստագործական կոոպերացիայի փոխ. ապահովագրական և փոխ. օգնության գանձարկղների ամբողջ սիստեմում:

3. Յերեխաների ծննդյան նպաստների վերաբերյալ կանոնադրության ներգործման մեջ մտցնել 1937 թ. օգոստոսի 1-ից, նույնպես և տարածելով այս, այն նպաստի վճարման դեպքում, վորը վճարված չի յեղել 1937 թ. օգոստոսի 1-ին:

4. Ներգործման մեջ մտցնելով յերեխաների ծննդյան նպաստ-

ների կանոնադրությունը, չեղյալ համարել դրամական ձևով սպասարկման վերաբերյալ կանոնադրությունն այն մասին, վորը վերաբերվում ե Համարդկոոպգանձարկղի նախագահության 1933 թ. յերեխաների ծննդյան նպաստների ապահովմանը:

ՀԱՄԱՐԴԿՈՈՊԳԱՆՁԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ *Ա. ԺԱՐՈՎ*

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ *Ա. ՄԱԼԱԽՈՎ*

---

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՆԴՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### 1. *ԻՆՉՈՒՄՆ Ե ԿԱՅԱՆՈՒՄ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՆԴՅԱՆ ՆՊԱՍՏԸ*

1. *Յերեխաների ծննդյան նպաստը բաղկացած ե նորածինների խնամելու համար միանվագ նպաստից և յերեխայի կերակրելու նպաստից:*

### 2. ՈՎ ՆՊԱՍՏԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ

2. *Յերեխայի ծննդյան նպաստի իրավունք ունեն:*

*ա) Բոլոր արհեստավորական կոոպերացիայի արտելների անդամները: Արհեստանոցներում միայն իրենց աշխատանքով ապահովված պրոմկոլխոզի անդամները:*

*բ) Բարձրագույն ուսումնական ձեռնարկներում, տեխնիկումներում, բանֆակներում, խոր. և կուսդպրոցներում, մասնագիտության բարձրացման, մասնագիտության վերապատրաստման ու կադրերի պատրաստման կուրսերում սովորողները — բոլորն այն պայմանով, յեթե մինչ ուսումնական ձեռնարկներն ընդունվելը նրանք անմիջականորեն աշխատել են վորպես արտելի անդամներ:*

3. *Յեթե ծնողները վոչ հաշվառված ամուսիններ են և ընդվորում յերեխայի հայրը միայն նպաստ ստանալու իրավունք ունի, ապա միայն այն դեպքում, յերբ Զագսի հաշվառման կամ դատական վորոշման ուժով հաստատված ե հայրությունը:*

4. *Յերեխաներին ծննդյան նպաստ տրվում ե նույնիսկ յերեխայի ծնվելուց առաջ հոր մահանալու դեպքում, յեթե նա մահվան որերին նպաստի իրավունք ուներ:*

*Մեռնողը յերեխայի հայր ե համարվում, յեթե նրա մահանալու որվանից մինչև յերեխայի ծնվելը անցել ե 9 ամսից վոչ ավել:*

5. Յերեխայի կերակրման նպաստի յուրաքանչյուր ամսը յենթակա յե վճարման, նույնիսկ յեթե խնամելու նպաստը և կերակրելու նպաստի առաջին մասի վճարելուց հետո ծնողները դուրս են յեկել արտելի կազմից:

6. Բ. Գ. Կ. Բանակի կազմ նշանակված արտելի անդամները, վորոնք վերջին աշխատավարձի վճարման որերին նպաստի իրավունք են ունեցել, այդ իրավունքը պահպանվում է, յեթե յերեխան ծնվել է նշված որվանից 9 ամիս հետո:

Յերկրային մասերի փոփոխիկ կազմում յերեքից հինգ ամսով վարժեցման կամ հավաքի կանչված արտելի անդամները, վորոնք յերեխայի ծննդյան նպաստի իրավունք ունեն, այդպիսիների իրավունքները պահպանվում են, յեթե յերեխան ծնվել է վարժեցման կամ հավաքի ժամանակ:

7. Կալանքի տակ գտնվողների յերեխաների ծննդյան նպաստի իրավունքը պահպանվում է, յեթե յերեխան ծնվել է մինչև արտելում աշխատանքի ընդունումը:

8. Արտելում պարտադիր աշխատանքում գտնվող արտելի անդամին յերեխայի ծննդյան նպաստ տրվում է ընդհանուր հիմունքներով: Փորձնական աշխատանքում յեղած ժամանակը չի ընդհատում ստաժը և ստաժ էլ չի հաշվվում:

## 3. ՆՊԱՍՏ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՆՉ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՍՏԱԺ Է ՊԵՏՔ

9. Ստախանովականներին և հարվածայիններին, վորոնք անմիջականորեն զբաղված են արտադրությունում և փոխ. ապահով. գանձարկղի թոշակառուներին — յերեխաների ծննդյան նպաստ տրվում է անկախ նրանց աշխատանքի ստաժի տևողությունից:

Մնացած կարգի արտելի անդամներին յերեխայի ծննդյան նպաստ ստանալու համար, անհրաժեշտ է ունենալ անմիջական յերեխայի ծնունդից ութ ամսվա ստաժ, իսկ տանն աշխատող արտելի անդամներին 12 ամսվա աշխատանքային ստաժ:

Ժամանակավոր անաշխատունակության համար ստացած նպաստի ժամանակաընթացքը հաշվվում է աշխատանքի ստաժ:

10. Յեթե արտելի անդամն անցնում է մեկ արտելից մյուսը կամ մեկ հիմնարկից, ձեռնարկից՝ մյուսը կամ արտել և վոչ ներքին կարգապահության կանոնադրության կամ որենսդրության խախտման հետևանքով, ապա այդպիսի փոխադրվելը չի ընդհատում ստաժի անընդհատությունը, յեթե յերկու աշխատանքների միջև ընդմիջումը չի գերազանցում մեկ ամսից:



Սոց. ապահով. և սոցապահովագրման կարգով թոշակ ստացած ժամանակը չի ընդհատում ստաժը (բայց չի յել հաշվվում ստաժ):

11. Ծառայողների և բանվորների աշխատանքի ժամանակը, ստաժը հաշվելիս, նրանց աշխատանքը հավասարեցվում է արհեստավորական կոոպերացիայի արտելների անդամների աշխատանքին:

ԲԳԿ Բանակի շարքերում ծառայությունը հաշվվում է աշխատանքի ստաժ, վորոնք ազատվել են յերկարատև արձակուրդով, պահեստի կամ միանգամայն ծառայությունից:

ա) Գերշտապ ծառայող անձնավորությունների շարքային, կրտսեր և պետ հրամանատարական կազմը, նույնպես և միջին, ավագ և բարձր հրամանատարական ու պետ կազմի ծառայողները:

բ) Շարքային և կրտսեր հրամանատարական ու պետ կազմի անձնավորությունները, յեթե նրանք միջին հրամանատարական և պետ պահեստի կոչման քննություններ տվել են վորպես արտելի անդամների, բանվոր կամ ծառայող աշխատել են մինչ ԲԳԿ Բանակի շարքերում ընդունվելը:

Ուսումնական ձեռնարկներում յեղած ժամանակը ստաժ է հաշվվում, յեթե սովորողը մինչ ուսման ընդունվելն աշխատել է վորպես արտելի անդամի, բանվոր կամ ծառայող:

## 4. ԻՆՉՊԻՍԻ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՆՊԱՍՏ ՉԻ ՏՐՎՈՒՄ

12. Յերեխայի ծննդյան նպաստ չի նշանակվում, յեթե յերեխայի ծնված առաջի ամսաթվից 2 ամսվա ընթացքում ծնողների յերկուսի աշխատավարձը (թոշակ, նպաստ), ընտանիքի մեկ անդամի համար ամսեկան 125 ռուբլուց գերազանցում է: Մեկ ընտանիքի անդամի յեկամուտը հաշվելուց, բացի ծնողների յերեխաներից — հաշվելով նորածինը հաշվի յեն առնվում միասին ապրող մնացած խնամքի տակ գտնվողները, յեթե նրանք չունեն ինքնուրույն յեկամուտի աղբյուր:

13. Յեթե յերեխայի մայրը գտնվում է գյուղական վայրում և մտնում է մենատնտես կազմի մեջ, ապա յերեխայի խնամելու և կերակրելու նպաստ չի տրվում:

Յեթե յերեխայի մայրն ապրում է գյուղական վայրում և մտնում է կոլտնտեսության կազմի մեջ, ապա միայն տրվում է նորածինին խնամելու նպաստը:

Գյուղական վայրում տունն իրեն պատկանելը և անհատական օգտագործման համար կով, խոզ և այլն ունենալը արտելի անդամը մենատնտես չի հաշվվում, յեթե չունի հողագործական հողամաս:

14. Խնամելու և կերակրելու նպաստ չի տրվում, յեթե յերեխան ծնվել է մեռած:

## 5. ԻՆՉ ՉԱՓՈՎ Է ՆՊԱՍՏԸ ՏՐՎՈՒՄ

15. Նորածինին խնամելու համար կարեվոր իրերի ձեռք բերման նպաստը տրվում է 45 ռուբլու չափով: Յերեխային 9 ամսվա կերակրելու համար նպաստը տրվում է ամսական տասը ռուբլի:

16. Յերկու կամ յերեք յերեխայի ծնվելու դեպքում նպաստը տրվում է յուրաքանչյուր յերեխային առանձին:

## 6. ՆՊԱՍՏԸ ՅԵՐԲ ԵՆ ՏԱԼԻՍ

17. Նորածնին խնամելու համար միանվագ նպաստը տրվում է ծնունդից հետո, անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման որը: (Հոդ. 23): Այդ նպաստի համար կարելի յե դիմել 6 ամսից վոչ ուշ յերեխայի ծնվելուց հետո:

18. Յերեխային կերակրելու նպաստը տրվում է յերկու ժամկետում: Նպաստի առաջին մասը, 50 ռուբլ., տրվում է նորածինին խնամելու նպաստի հետ միասին, (յեթե նույնիսկ յերեխան դիմելու որը մեռել է): Իսկ յերկրորդ մասը՝ 40 ռուբլին տրվում է յերեխան 5 ամսական հասնելու ժամանակ: Կերակրելու նպաստի յերկրորդ մասը տրվում է, նպաստի առաջին մասի ստացած անձին: Յեթե յերեխային կերակրելու նպաստը չի ստացված ժամանակին, ապա այդ նպաստի համար կարելի յե դիմել ծնունդից հետո 10 ամսից վոչ ուշ ժամանակում:

19. Հոդ. հոդ. 17–18 սահմանված ժամկետներն անցկացնելու դեպքում, յերեխայի ծննդյան նպաստը կարելի յե տալ միայն բացառիկ դեպքերում, ըստ Արտ. ապահովագրական գանձարկղի կարգադրության:



## 7. ՆՊԱՍՏԸ ՈՒՄ ԵՆ ՏԱԼԻՍ

20. Յերեխային խնամելու և կերակրելու նպաստը տալիս են նպաստ իրավունք վորոշող փաստաթղթերը ներկայացնող ծնողներից վորևե մեկին:

Յերեխայի ծնողների բացակայության դեպքում յերեխայի ծննդյան նպաստը տալիս են խնամակալին:

## 8. ՈՎ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ՅԵՎ ՈՎ Է ՏԱԼԻՍ ՆՊԱՍՏԸ

21. Յերեխայի ծննդյան նպաստը նշանակում է Արտապահովագրական գանձարկղը:

Ըստ Արտապահովագրական գանձարկղի վորոշման, բոլոր նրա ֆունկցիաները, նպաստների ապահովման բնագավառում, կարելի յե հանձնել աշխատանքի պաշտ. և կենցաղ բարելավող բյուրոներին (ԱՊԿԲԲ), իսկ վորտեղ ԱՊԿԲԲ չկա, ապահովագրական լիազորներին, արտ. ապահովագրական գանձարկղի կողմից հետեվողականորեն ստուգման յենթարկելով:

Նպաստների վճարումը կատարվում է արտելների վարչությունների կողմից, նպաստները վճարվում են ի հաշիվ արտելներից ստացվելիք ապահովագրական մուծումների:

Նպաստների վճարումների և հաշվառումների բոլոր աշխատանքները կատարվում են արտելի կողմից առանձին արտ. ապահովագրական գանձարկղի կողմից վորևիցե վճարումի:

Թոշակառուների (արտելում աշխատող անդամների) և սովորողների (նախկին արտելի անդամների), նպաստը նշանակվում է և վճարվում է արտ. ապահովագրական գանձարկղի կողմից ըստ նրանց ապրելավայրի:

22 Արտ. ապահովագրական գանձարկղը չի ընդունում արտելների կողմից, նպաստի վճարման որվանից 15 որ ուշ, ներկայացված ի հաշիվ ապահովագրական մուծումների վճարված յերեխային խնամելու և կերակրելու նպաստների մարված փաստաթղթերը:

## 9. ԻՆՉՊԻՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՊԵՏՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՆՊԱՍՏ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

23. Յերեխայի ծննդյան նպաստը ստանալու համար պետք է ներկայացնել՝

ա) Երեխայի ծննդյան վերաբերյալ Զագսից վկայական։

բ) Ծնողների յերկուսի առաջիկա յերկու ամիսների աշխատավարձի և խնամքի տակ գտնվող ընտանիքի անդամների քանակի վերաբերյալ տեղեկանք։

գ) Երեխայի ապրելավայրի վերաբերյալ վկայական, իսկ յեթե նա գտնվում ե գյուղական վայրում, ապա նույնպես և վկայական այն մասին, վոր յերեխայի մայրը չի մտնում արդյոք գյուղական մենատնտես կամ կոլեկտիվ տնտեսության կազմի մեջ։

24. Երեխայի կերակրման նպաստի յերկրորդ մասը ստանալու ժամանակ (յերեխայի ծննդից հետո, 6-րդ ամսում), պետք ե տնային լիազորից, գյուղխորհրդից, մասից կամ կոնսուլտացիայից ներկայացնել տեղեկանք այն մասին, վոր յերեխան կենդանի յե։

## 10. ՎՈՐՏԵՂ ԿԱՐԵԼԻ ՅԵ ԲՈՂՈՔՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ

25. Նպաստների մերժման կամ նրա չափի վոչ ճիշտ սահմանման վերաբերյալ բողոքները ներկայացվում ե փոխ. ապահովագրական գանձարկղի սիստեմի հետևյալ վերադաս մարմիններին։

Արտելների վարչությունների կողմից նպաստի վոչ ճիշտ վճարման կամ ուշացման վերաբերյալ բողոքները ներկայացվում ե արտ. ապահով. գանձարկղին։

## 11. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՏ. ԱՊԱՀՈՎ. ԳԱՆՁԱՐԿՂՆԵՐՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ՎՈՉ ԿՈՈՊԵՐԱՑՎԱԾ ՏՆԱՅՆԱԳՈՐԾՆԵՐԻ ՆՈՐԱԾԻՆ ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՆՊԱՍՏՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

26. Արտ. ապ. գանձարկղներում անհատապես ապահովագրված, վոչ կոոպերացված տնայնագործներն ապահովվում են յերեխաներին խնամելու և կերակրելու նպաստով, յեթե ապահովագրական դեպքի հասնելու ժամանակ նրանք համարվել են պարտաճանաչ վճարողներ։ (Չեն ունեցել մուծումների պարտքեր)։



27. Վոչ կոոպերացված տնայնագործների ստաժի տեվողությունը վորոշվում ե ըստ գանձարկղում անընդհատ ապահովագրված ամիսների քանակով։

ՀԱՄԱՐԴԿՈՈՊԳԱՆՁԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԺԱՐՈՎ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՄԱԼԱԽՈՎ

1. Արհեստագործական կոոպերացիայի ապահովագրական գանձարկղի կողմից թոշակների և նպաստների մերժումների վերաբերյալ դատի տալու վեճերի մասին։

ՌՍՖՍՀ Գերագույն դատարանի պլենումի 1930 թ. դեկտեմբերի 16-ի մեկնաբանումը։ Ընդունել, վոր արտ. ապահով. գանձարկղի կողմից թոշակառուների և նպաստների նշանակումների մերժման վերաբերյալ բողոքները լուծվում են ինստանցիոնների կարգով և դատական վերանայման յենթակա չեն («Դատական պրակտիկա» 1931 թ. № 8)։

Հայերեն թարգմանության խմբագիր՝ Մ. ՔԱՑԵՎԼՅԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0225347

239

43. 285

Գլավլիտի լիազոր—№ 394
Պատվեր № 306
Տիրաժ 300 օրինակ